

ՀԱՆԳԻՍ

Տ. ՄԱՏԹԵՈՍ Ս. ԱՐՔԵՊՍ. ԻՆՃԷԵԱՆԻ

1877 - 1950

Հեռագիր մը կը գուժէ մահը Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկ. Ինճէեանի, պատուական հոգեւոր հովուին Մանչեսթրի:

Ինճէեան Սրբազանը ծնած է Գումգարու, 1877 ին, իր նախնական կրթութիւնը ստացած է քաղաքին ազգային վարժարանը, ապա Բարիզ, հետեւելու համար իրաւաբանութեան:

1909-ին կը ձեռնադրուի վարդապետ, Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ, ժամանակ մը հետեւելէ վերջ Արմաշու Դպրեվանքին կրօնական դասընթացքին, ձեռամբ հոգեւոյս Իգմիրլեանի, որ իր անունով կը կոչէ իր ձեռնասունը:

Ինճէեան վարդապետը կարճ շրջանի մը համար կը պաշտօնավարէ Սկիւտարի մէջ, ապա կը հրաւիրուի Սիսի առաջնորդութեան, ու անկէ վերջ Զմիւռնիոյ կարեւոր թեմի հովուութեան, ուր կը մնայ երկար տարիներ:

1914-ին Զմիւռնիոյ ժողովուրդի միահամուռ փափաքին վրայ կը մեկնի Էջմիածին, ընդունելու եպիսկոպոսական օծում Տ. Տ. Գէորգ Ե. կաթողիկոսի կողմէն: Զմիւռնիոյ իր առաջնորդութեան շրջանին, շնորհիւ կառավարական կարեւոր անձնաւորութեանց հետ իր ունեցած բարեկամական կապերուն, կը յաջողի յետաձգել եւ ընդհանուր տեղահանութենէն ու ջարդէն ազատել քաղաքին բազմահազար բնակչութիւնը:

Համաշխարհային առաջին պատերազմէն յետոյ կը պաշտօնավարէ Սամսոնի մէջ, ապա կը ստանձնէ հոգեւոր հովուութիւնը Եւրոպայի հայոց, հուսկ յետոյ իր առողջական վիճակին բերմամբ կը մնայ միայն հոգեւոր հովիւ Մանչեսթրի, զբաւելով այդ փոքրիկ բայց սրտով մեծ եւ բարեկեցիկ թեմի ժողովուրդին սէրն ու յարգանքը, մինչեւ իր մահը:

1932-ին գացած է Էջմիածին, իբր պատգամաւոր մասնակցելու յաւիտ անմոռաց Տ. Տ. Խորէն կաթողիկոսի ընտրութեան, եւ ստացած արքութեան աստիճան նորընտիր Վեհափառէն:

Շնորհիւ իր զարգացումին եւ ազնիւ բնաւորութեան, բոլորէն սիրուած անձնաւորութիւն մը եղաւ հանգուցեալ Սրբազանը, վայելելով յարգանքն ու բարեկամութիւնը Քէնթըրպրի Արքեպիսկոպոսին եւ ուրիշներու: Վստահ ենք թէ շնորհիւ իր այս յատկութիւններուն եւ նուիրումին իր թաղման օրը լացի օր մը եղաւ Մանչեսթրի հայութեան, որ միշտ իր մէջ գտաւ բարի եւ արի հովուի մը առաքնութիւնները:

Հանգիստ իր հոգիին:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.